ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1610-Ա «30» մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08-Ի Հ.3668-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Սյուզաննա Վարդազարյանի 20.03.2026թ. հ.Դ-27269-26 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2025 թվականի սեպտեմբերի 08-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.3668-Ա որոշման հավելվածի 7-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
30.03. 2026թ.
հ. 1610-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Ժերժ Պետրոսսյան և Էմին Զոհրաբյան	Զոր-1 թաղամաս, հ.19	նկուղ	Անշարժ գույքի առուվաճառքի 27.02.2026թ. հ.1196 պայմանագրով, Ժերժ Պետրոսսյանի և Էմին Զոհրաբյանի կողմից ձեռք բերված Զոր-1 թաղամասի հ.19 հասցեում գտնվող նկուղին տրամադրել հասցե՝ Դավթաշեն «Զոր-1» թաղամաս, հ.19 շենք, հ.9	01043ZGZUF4P	
2	«ՄԵՐԱՐՄԻՆՎԵՍԹ» ՍՊԸ	Է. Իսաբեկյան փողոց, հ.1/2 շենք, հ.9 և հ.10	բնակարան	«ՄԵՐԱՐՄԻՆՎԵՍԹ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Է. Իսաբեկյան փողոցի հ.1/2 շենքի հ.9 և հ.10 հասցեներում գտնվող բնակարաններին /վկ. հ.20082025-01-0181 և հ.06032026-01-0261/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Է. Իսաբեկյան փողոց, հ.1/2 շենք, բն.9-10	01093UXGJLVX	
3	Արսեն Պողոսյան	Շենգավիթ	հողամաս	Արսեն Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, Շենգավիթում գտնվող հողամասին /հիմք՝ վկ. հ.13122024-01-0264 և Երևանի քաղաքապետի 22.07.2025թ. հ.2938-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Ներքին Զարբախ 1-ին փողոց, 4-րդ փակուղի, հ.22	01113APBANX8	

4	Արսեն Պողոսյան /լիազորված անձ/ Գագիկ Հակոբյան	Շենգավիթ	հողամաս	Գագիկ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող, Շենգավիթում գտնվող հողամասին /հիմք՝ վկ. հ.28122024-01-0290 և Երևանի քաղաքապետի 25.02.2026թ. հ.1056-Ա որոշում/ տրամադրել հասցե՝ Ներքին Զարբախ 1-ին փողոց, 4-րդ փակուղի, հ.18	0111337USWG3	
5	Էդգար Հովհաննիսյան	Ղ. Փարպեցու փողոց, հ.16 շենք, հ.6	ձեղնահարկ	Էդգար Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, Ղ. Փարպեցու փողոցի հ.16 շենքի հ.6 հասցեում գտնվող 147.8քմ մակերեսով ձեղնահարկին /վկ. հ.19032026-01-0120/ տրամադրել հասցե՝ Ղ. Փարպեցու փողոց, հ.16 շենք, հ.6/1	01063LYQWDZT	
6	Արման Ստեփանյան /լիազորված անձ/ Էդմոնդ Զորաբյան	Հյուսիսային ճառագայթ փողոց, հ.18 շենք, հ.3	ավտոկայանատեղ	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 21.03.2025թ. հ.1745 վկայագրով, Էդմոնդ Զորաբյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Հյուսիսային ճառագայթ փողոցի հ.18 շենքի հ.3 հասցեում գտնվող ավտոկայանատեղին տրամադրել հասցե՝ Հյուսիսային ճառագայթ փողոց, հ.18 շենք, ավտոկայանատեղ հ.18	010336BUWXRV	
7	Արմեն Գրիգորյան	Մարշալ Խուդյակովի փողոց, /Ավան 7-րդ փողոց/ հ.5	բնակելի տուն	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 10.07.2023թ. հ.15785 վկայագրով, Արմեն Գրիգորյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Ավան 7-րդ փողոցի հ.5 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Մարշալ Խուդյակովի փողոց, հ.5/2	01023JBE22RS	
8	Տարոն Ազիզյան	Շիրակի փողոց, 2-րդ նրբանցք, հ.2 շենք, հ.22	բնակարան	Տարոն Ազիզյանին սեփականության իրավունքով պատկանող, Շիրակի փողոցի 2-րդ նրբանցքի հ.2 շենքի հ.22 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.10022026-01-0309, ընդհ. բաժն. 2.4քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 44.5քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Շիրակի փողոց, 2-րդ նրբանցք, հ.2 շենք, բն.22/1	01113JGXNDGE	
9	Արմեն Բուդուլյան	Հ. Քաջազնունու /Կուզնեցովի/ փողոց, հ.14 շենք, հ.59	բնակարան	Արմեն Բուդուլյանին սեփականության իրավունքով պատկանող, Հ. Քաջազնունու /Կուզնեցովի/ փողոցի հ.14 շենքի հ.59 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.05022026-01-0519, ընդհ. բաժն. 1.72քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 49.88քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Հ. Քաջազնունու փողոց, հ.14 շենք, բն.59/1	01063MTUZCFY	

10	Գուրգեն Հովսեփյան /լիազորված անձ/ Գոհարիկ Բաղմանյան /սեփականատեր/	Մոլդովական փողոց, հ.46 շենք, հ.46 և հ.46/1	բնակարան	Գոհարիկ Բաղմանյանին սեփականության իրավունքով պատկանող, Մոլդովական փողոցի հ.46 շենքի հ.46 և հ.46/1 հասցեներում գտնվող բնակարաններին /վկ. հ.12022026-01-0523 և 10022026-01-0104/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Մոլդովական փողոց, հ.46 շենք, բն.46	01083Y4DNED8	
11	Տիգրան Մալխասյան	Հ. Մելքումովի փողոց, հ.46/2 և հ.48	հողամաս	Տիգրան Մալխասյանին սեփականության իրավունքով պատկանող, Հ. Մելքումովի փողոցի հ.46/2 և հ.48 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.26022026-01-0351 և հ.29012026-01-0196, շին.՝ 80.3քմ/ ըստ միավորման հատակագծի տրամադրել մեկ միասնական հասցե՝ Հ. Մելքումովի փողոց, հ.48	01043GLFB6FU	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**